9599

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 22 » 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0132-21

Ձեռնարկողը՝ ***«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ***
Լոռու մարզ, ք. Ախթալա

Գործունեությունը՝ ***«Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0132-21

< 22 > 07 2021թ.

«Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Ախթալա համայնք

Ներածական մաս. Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Ախթալա կայարանից 2 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք:

Ներկայումս ֆաբրիկայում վերամշակվում են Շամլուղի հանքավայրի պղնձա-կոլչեդանային հանքաքարերը: Ֆաբրիկայի նախագծային արտադրողականությունը կազմում է 500 հազ. տ/տարի:

«Նահատակ» պոչամբարը գտնվում է Այրում գյուղին կից՝Մեծ Այրում և Ճոճկան գյուղերի վարչական տարածքում, հարստացուցիչ ֆաբրիկայից 6424մ հեռավորության վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ֆաբրիկայի պոչերը 1967 թվականից պահեստավորվել են «Նահատակ» պոչամբարում, որը գտնվում է Նահատակ գետի հունում, ֆաբրիկայից 6.5 կմ հեռավորության վրա:

1988 թվականին պոչամբարի շահագործումը դադարեցվել է՝ ֆաբրիկայի ապամոնտաժման պատճառով: 2001թ. «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մշակվեց և իրականացվեց Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի վերագործարկման նախագիծը: 2001-2009թթ. ֆաբրիկայի պոչերը ժամանակավորապես պահեստավորվել են «ՊՆ» և «Նազիկ» փոքրածավալ պոչամբարներում: 2009թ. «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մշակվեց «Նահատակ» պոչամբարի վերականգնման նախագիծը և այն վերագործարկվեց: Ներկայումս հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերը (8-10% խոնավությամբ) պահեստավորում են բացահանքի արդյունահանված տարածքում:

Նահատակ գետի կիրճի հատվածը, որտեղ գտնվում է պոչամբարը, մեծամասնությամբ կտրուկ անկում ունեցող ժայռեր են, որոնց վրա հողածածկույթը բացակայում է, իսկ հողաշերտով ծածկված տեղամասերում հողերը ուժեղ էրոզացված:

Հողերի ռեկուլտիվացման բոլոր աշխատանքները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2017թ. դեկտեմբերի 14-ին հաստատված «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումը ըստ ռեկուլտիվացման ուղղությունների» թիվ 1643-Ն որոշման համաձայն:

Ներկայացված տեղագրական հանույթի հիման վրա «Նահատակ» պոչամբարի ներկայիս չափերը՝

-ամենամեծ երկարությունը՝ 993 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 446 մ,
- ամենափոքր լայնությունը՝ 101մ,
- շեպի թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ՝ 15 – 18 աստիճան:

Պոչամբարի ռեկուլտիվացիայի ենթակա մակերեսը՝ պատնեշի թեքությունների մակերեսի հետ, կազմում է՝ 17.83 հա:

Պոչամբարի ռեկուլտիվացման համար, մշակվել է նախագծի 2 տարբերակ (տարբերակներ Ա և Բ): Ձեռնարկությունը նախընտրում է «Ա» տարբերակը, որը նախատեսում է կեսաբանական ռեկուլտիվացիան իրականացնել հողի բերրի շերտով:

Ա տարբերակը նախատեսում է պոչամբարի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացման փուլը նախատեսվում է պոչամբարի մակերեսին (2 տեղամաս) տալ 0.3% թեքություն դեպի ջրահեռացման առուն, մթնոլորտային տեղումների հեռացման համար:

Առաջարկվում է պոչամբարի մակերեսը հարթացնել և այն ծածկել 0,5-1մմ հաստությամբ՝ օրինակ ΜΕΑΠΛΑΣΤ մակնիշի գեոմեմբրանով, որի պատռվածքի դիմադրողականությունը համեմատաբար կազմում է 130 կամ 250Н [29]: Կարելի է օգտագործել նաև АНИКОМ մակնիշի գեոմեմբրան:

Գեոմեմբրանի տեղադրումը կբացառի ինչպես մթնոլորտային տեղումների ներթափանցումը դեպի պոչեր, այնպես էլ պոչամբարի զանգվածից ջրերի ներթափանցումը ռեկուլտիվացված շերտ: Տեղումների ջրի ավելցուկը՝ առանց ներթափանցման պոչեր, կհեռացվի պոչամբարի մակերեսից: Թաղանթի վրա նախատեսվում է փռել 30սմ հաստությամբ ապարների շերտ (դրենաժային շերտ) և հարթացնել: Որպես դրենաժային շերտ՝ կարելի է օգտագործել Շամլուղի բացահանքի լցակույտի դատարկ ապարները կամ նմանատիպ գրունտներ:

Պատնեշի փեշերի թեքությունը կազմում է 15-18^0, իսկ բարձրությունը՝ 50-55մ, այս տարածքում նախատեսվում է միայն կենսաբանական ռեկուլտիվացում հիդրոցանքի եղանակով:

Կենսաբանական ռեկուլտիվացման փուլը, 2 տեղամասում նախատեսվում է դրենաժային շերտը ծածկել 20սմ հողի բերրի շերտով և վրան իրականացնել տարածքին բնորոշ խոտաբույսերի ցանք:

Ռեկուլտիվացման 2-րդ փուլի 3-րդ տեղամասի աշխատանքները կսկսվեն պոչամբարի խոնավ մակերեսի և ջրի բնական չորացումից հետո: Պոչամբարի չորացումը ջրի հեռացման եղանակով կբերի Դեբետ գետի ջրերի լրացուցիչ աղտոտմանը՝ արտադրական կեղտաջրերով: Այս փուլի աշխատանքները կարելի է սկսել միայն պոչամբարի խոնավ

մակերեսի վերջնական չորացումից հետո, երբ հնարավոր կլինի այս տարածքում ծանր տեխնիկայի աշխատանքը:

Առաջին տեղամասի ռեկուլտիվացիան իրականացվում է առաջնահերթ՝ միայն հիդրոցանքի եղանակով:

Մթնոլորտային տեղումների հեռացման համար հարթակներին տրվում է դեպի ջրահեռացման առուն 0.3% թեքություն: Ջրահեռացման առուն ուղեգծված է պոչամբարի արևելյան եզրագծով, դրա պարամետրերն են. լայնքը՝ 1մ, խորությունը՝ 0,5մ, ընդհանուր երկարությունը՝ 916մ, հողային աշխատանքների ծավալը՝ 458մ^3: Այս հանվող գրունտերի ծավալը նախատեսվում է օգտագործել տեխնիկական ռեկուլտիվացիայի ընթացքում:

Ռեկուլտիվացման աշխատանքների ընդհանուր ժամկետը կկազմի 2.4 տարի:

Ռեկուլտիվացման աշխատանքներին զուգահեռ կատարվելու է պոչատարի երկու գծերի ապամոնտաժում:

Պոչատարների փաստացի պարամետրերն են.

-երկարությունը՝ 6424 մետր,այդ թվում՝

- բաց ուղեգիծ - մետաղական խողովակաշար՝ 2736մ, փակ ուղեգիծ (թունելներում) պոլիէթիլենային խողովակաշար՝ 3686մ,
- խողովակների տրամագիծը՝ բաց խողովակաշարում՝ 219 մմ, փակ խողովակաշարում՝ 225 մմ,
- թունելների ելքը և մուտքը փակվում են ճաղավանդակներով:

Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 738 944 940 ՀՀ դրամ: Ռեկուլտիվացման աշխատանքների իրանականացման բոլոր ծախսերը կատարելու է Ախթալայի ԼՀԿ-ն:

Ռեկուլտիվացիայի աշխատանքների ընթացքում կենցաղային աղբը կուտակվելու է դրա համար նախատեսված աղբարկղերում, որից հետո այն պարբերաբար կհեռացվի շինհրապարակից «Կոմունալ ծառայության» կողմից: Ուրիշ թափոններ աշխտանքների ժամանակ չեն առաջանում ու տարածքում չեն կուտակվում:

Պոչամբարի ռեկուլտիվացիայի ընթացքում հիմնականում աշխատելու է մեկ բուլդոզեր, էքսկավատորի աշխատանքը նախատեսված է մի քանի օրով ջրհեռացման ջրանցքի կառուցման համար: Բուլդոզերի և էքսկավատորի միաժամանակ աշխատանք չի նախատեսվում:

Պոչամբարում աշխատում են հերթափոխով 18 մարդ: Ներկայումս Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայում ներդրված է չոր պոչերի պահեստավորման տեխնոլոգիա, որը նախատեսում է պոչերի պահեստավորումը բացահանքի արդյունահանված տարածքում:

«Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիայի արդյունքում մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի հաշվարկների արդյունքում աղտոտող նյութերի սպասվելիք առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են նորմերի սահմաններում:

Հողի ու ջրի մոնիթորինգի հինգ տարվա համար նախատեսվող ծախսը կկազմի 12084 հազ.դրամ:

Անմիջապես ռեկուլտիվացիայի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Պոչամբարի ռեկուլտիվացիան արդեն իսկ բնապահպանական միջոցառում է: Պոչամբարի ազդեցությունը շրջակա միջավայրի սահմանափակվում է ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակահատվածով և կրում է ժամանակավոր բնույթ:

-Գրունտի և հողի բերրի շերտի տեղափոխող մեքենաների թափքը պետք է ծածկված լինի,

- հերթափոխում առնվազն մեկ անգամ շոգ և չոր եղանակին պետք է իրականացվի տարածքի ջրցանում,

- տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված,

- պոչամբարի ամբողջ պարագծով նախատեսվում է ցանկապատ՝ 2մ բարձրությամբ, որի վրա պետք է փակցված լինեն զգուշացման նշաններ:

Պատճառաբանական մաս. Լոռու մարզի Ախթալա համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Լոռու մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Նախքան ռեկուլտիվացման աշխատանքները սկսելը, անհրաժեշտ է իրականացնել պոչամբարի պատնեշի հետազոտություններ, որի հիման վրա վերացնել թերությունները, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ աշխատանքնել իրականացնել պատնեշի կայունությունը բարձրացնելու ուղությամբ:

- Անվտանգությունից ելնելով, ռեկուլտիվացված պոչամբարի տարածքը առաջարկվում է արտաքին եզրագծով ցանկապատել 2մ բարձրությամբ և 2630մ ընդհանուր երկարությամբ փշալարե ցանկապատով:

- Պոչամբարի ռեկուլտիվացիայից հետո՝ 5 տարվա ընթացքում, պետք է իրականացվի Նահատակ գետի ջրերի եռամսյա մոնիթորինգ:

- Մշտադիտարկումների ընթացքում պետք է ուսումնասիրվեն հետևյալ ցուցանիշները՝

- pH, էլեկտրահաղորդականություն, լուծված թթվածին,

- ջրերի իոնային հաշվեկշիռ՝ ընդհանուր ալկալիություն,

- Ca, Mg, K, Na, As, Co, Cu, Feընդ, Mn, , Zn, Cl^-, SO_4^{2-}, HCO_3^-, CO_3^{2-} (մգ/լ), ԹՔՊ, մգO_2/լ,

- նավթամթերքներ, կախված նյութեր, չոր մնացորդ, մգ/լ,

- կոշտություն, մգ-էկվ/լ,

- հիմնայնություն, մգ-էկվ/լ:

- Պոչամբարի տարածքում հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ առնվազն վեց ամիսը մեկ՝ հետագա 5 տարիների ընթացքում, նվազագույնը 4 կետից:

- Հողերի նմուշառում 20-25սմ խորությունից և քիմիական անալիզ՝ As, Co, Cu, $Fe_{ընդ}$, Mn, , Zn, Cl^-, SO_4^{2-}, մգ/կգ:
- Ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ.սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Ախթալայի «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան

Ընդամենը՝ 5 էջ